ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռի մի շարք միաբաններ նոր նշանակումներ են ստացել Մայր Աթոռի կառույցներում և Հայ Եկեղեցու տարբեր թեմերում:

Հոգեշնորհ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը, ազատվելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսչի պարտականություններից, նշանակվել է Ճեմարանի տեսուչ:

Հայորդյաց տների Կենտրոնական գրասենյակի տնօրեն Հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը համատեղության կարգով ծառայության է նշանակվել Արագածոտնի թեմում՝ որպես առաջնորդական տեղապահի ժամանակավոր պաշտոնակատար:

Հոգեշնորհ Տ. Նշան աբեղա Պետրոսյանը, ազատվելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսչի պարտականություններից, ծառայության է կոչվել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

Հոգեշնորհ Տ. Դավիթ աբեղա Քարամյանը, ազատվելով «Էջմիածին» ամսագրի փոխխմբագրի պարտականություններից, նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ